

Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Ինչ է կյանքը

Մի կերպ է կյանքը մեր Հենց մեր ծնված նույն օրից, Աստված դա մեզ շնորհեց Ու զգայարաններ մեզ տվեց: Հենց լույս աշխարհի որ եկանք, Ընկանք բառը ճշարտ, Որից հետո հայտնվեց Զգայարանները մեկ-մեկ: Լսողության, տեսողության, Հիշողության, հետո ատամ Հետո քայլել, որ չընկնել, Կամաց-կամաց մենք մեծացանք Ու ամեն ինչ իր տեղն ընկավ: Քանի որ դա հավերժական չի քեզ տրված, Որ ծառայի, տես, որ մի կյանք եկք մենք ապրում, Մեկ էլ տեսար հետ նայելու էլ ժամանակ չունենաք, Ժամանակն էլ քեզ չի սպասում, Կյանքիդ աշունն է քեզ կանչում, Սև մազերդ են սպիտակում, Ատամներդ են մեկ-մեկ թափվում, Լսողությունից են զրկվում, Տեսողությունդ է կորչում, էլ գլխովդ խեղդ չի մտնում: Պրոտեզն ու ակնոցներն են քեզ ողջունում, Լսողության ապարատն էս Ականջիդ մեջ տեղադրում Զեռնախայտն է կամաց-կամաց քեզ տեղ հասցում Հետ են նայում նկարներիդ շահել, Հիանում են քո պատկերով, Օ-Ֆ Աստված իմ, այս ինչքան են մեզ զեշացնում, Տերության գիրկը տանում, Նորից բոլոր զգայարաններդ հետ տված Կյանքի փրկության եկք կախված: Եվ ամեն մի լուսաբացին, Փառք ենք տալիս Աստծո խաչին, Որ այսօր էլ մենք ապրեցինք, Կյանքի հունում ծվարեցինք, Բայց լավ գիտես, որ աշխարհում Կա երկու բան թշնամական Մեկը՝ կյանքն է, մեկն էլ՝ մահը, Ինչքան էլ որ դաժան լինի, Հենց այդ մահը Քեզ կտանի քո տևից, Հենց այնտեղ էլ կյանքն ու հույսը կհեռանան, Քեզ համար էլ ամեն ինչ կվերջանա: Ես կասեի, մի հեքիաթ է կյանքը մեր, Եղել է այն, թե չի եղել:

Թամարա Հովսեփյան

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ

Է Է



ԷՇԸ

Էշը մի օր որոշեց Ուղտի տուն գնալ, Թե քիչ է գործը ուղտի Այնտեղ էլ մնալ:

Ուրախացավ ուղտն անչափ. -Ինչ լավ էր, եկար: Լիքը գործ կա անելու, Իսկ օգնող չկա:

Ը Ը



ԸՆՁՈՂՈՐՏ

Ընձուղտը լավ հարդարար է, Սաղարթներ է հարդարում: Նրա հարդարած ծառերը Սայր ցամաքն են հարդարում:

Թ Թ



ԹՄԲՈՒԿ


-Դում, դում-դում: -Դում, դում-դում: -Դում, դում-դում... Թմբուկն է թնդում: Ի՞նչ է թնդում, չգիտեմ, Թնդում է ու վերջ, Թմբկահարի տազնապն է Մտնել նրա մեջ:



Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян


Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАОНЯН




Кроссворд № 7

По вертикали: 1. Экран. 4. Рыжий. По горизонтали: 2. Молоко. 3. Миндаль. 5. Существо, создание



Кроссворд № 8

По вертикали: 1. Ужин. 2. Глаз. По горизонтали: 1. Подарок, дар. 3. Сестра.



Кроссворд № 9

По вертикали: 1. Носовой платок. 2. Город. 3. Шелковица. По горизонтали: 1. Чернила. 3. Бумага. 4. Наклон, наклонный.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симавонян

ИНТЕРВЬЮ

ԿՐԿԻՆ ԲԱՐՁՈՒՆՔԻՆ...



Այդ առիթով, չնայած մի փոքր ուշացած, որոշեցինք կրկին անդրադառնալ Արա Գևորգյանի ստեղծագործական կյանքին:

- Պարոն Գևորգյան, կապված ձեր կնոջ ցավալի կրթության հետ, այս վերջին տարում բավական հաճախ եք լինում Հայաստանում: Զեր եզրակացություններն ու կարծիքը դժվար թե չջանկանայիք կիսել մեզ հետ: Ի՞նչ հանդիպումների մասին կցանկանայիք պատմել:

- Այո՛, դուք ճիշտ եք: Երևանում ես այցելեցի Ատանիստյանի անվան ռուսական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանին, ով բավական դրական կարծիք հայտնեց Ռուստովում բեմադրված «Տիգրան Մեծ» պատմական դրամայի մասին և առաջարկեց Երևանում բեմադրել իմ «Արտավազը արքա» պատմական դրաման: Իմ կարծիքով, դա լավ առաջարկ է և Դոնի հայությունը կարող է մի փոքր ֆինանսական աջակցություն ցուցաբերել հայ թատրոնի նախաստեղծ Արտավազը արքային նվիրված ստեղծագործությունը բեմադրելու համար: Եվ դա նվիրել էր Երևանի-Երևանի հիմնադրման 2800-ամյակին: Թող իմանան, որ հայոց ոգին շարունակվում է ձայնել նախնիներիս հայության սրտերում:

- Մեր ընթերցողները մեծ հետաքրքրությամբ էին ընթերցում ձեր հոդվածների շարքը՝ նվիրված հայկական բառերի բացատրման ձեր ոճին: Կուզենայիք նաև ծանոթանալ հայ հեղինակների այն պատմվածքներին, որոնք դուք եք թարգմանել:

- Մենք արդեն պայմանավորվել ենք թերթի գլխավոր խմբագիր Վարդան Աբրահամյանի հետ և ես խոստացել եմ կրկին ներկայացնել Նյութեր՝ կապված հայկական բառաստեղծման և բառախմբաստվորման մասին: Շուտով թերթում կտպագրվի նաև երկրաշարժին նվիրված մի հիանալի պատմվածք՝ «Թող լուսավորվի անուրջը» արձեսակա:

- Զեր հայերեն գրված «Մեր քանդված եկեղեցիներին» գիրքը ապացուցում է, որ դուք հրաշալի տիրապետում եք նաև ձեր մայրենի լեզվին: Ինչո՞ւ եք վերջերս գրում միայն ռուսերեն:

- Յավոք սրտի, այդ գիրքը, որում ընդգրկված է 500 հայերեն բանաստեղծություն, այդպես էլ չգտավ ճանապարհի դեպի հայ ընթերցողի սիրտը: Զգիտեմ, թե ինչով է դա պայմանավորված, բայց իմ կարծիքով, ժամանակակից հայ ընթերցողը տարբերվում է սովետական շրջանի ընթերցողից: Ես զգացի, որ նույնիսկ իմ բեմականացրած «Տիգրան Մեծ»


պատմական դրաման ավելի շատ է հետաքրքրում ռուս հանդիսատեսին, քան հայ: Եթե դա այդպես է, ես կարծում եմ, որ պետք է գրել հենց ռուսերեն լեզվով, քանզի յուրաքանչյուր գրող իր ստեղծագործությունները գրելիս հաշվի է առնում այն միջավայրը, որում նա գտնվում է: Ես համոզված եմ, որ իմ գրած յուրաքանչյուր գործ ավելի լավ է ընկալվում ռուսերենով, քան հայերենով, չնայած՝ ես դեռ կվերադառնամ իմ խոհափիլիսոփայական պոեզիային, որը կգրեմ մայրենիով:

- Պարոն Գևորգյան, շնորհավորում ենք ձեզ, ձեր 4-րդ միջազգային Ալմանախի լույս տեսնելու կապակցությամբ, որտեղ դուք ներկայացրել եք 25 անգլագական հուշ-բանաստեղծություն՝ նվիրված ձեր սիրելի Լուիզային: Ուրախալի է, որ այնտեղ

ունեն ավարտել «Արտաշես Մեծ» պատմական դրաման, որով կկարողանա եզրափակել Արտաշեսյանների դինաստիայի վերաբերյալ տրիլոգիան: Պատրաստվում եմ հասարակությանը ներկայացնել իմ պատմվածքների ժողովածուն, որտեղ ես ներկայացրել եմ իմ անցած կյանքի տարբեր միջադեպերը: Կարծում եմ, որ դա այժմ արդիական է, երկար ժամանակ մտորում էի պոեզիայից անցնել դեպի արձակ, որովհետև զգացի, որ ընթերցողների հոծ բազմություն հետաքրքրվում են իմ պատմվածքներով: Կցանկանայի հրատարակել իմ դատեր՝ Անուշիկին և երկրաշարժի մյուս գոհերին նվիրված բավականին դրամատիկ իմ «Երկրաշարժի օրագիրը»:

Ուզում եմ վերջացնել նաև մի վեպ, որը նվիրված կլինի եղենից մազապուրծ իմ նախնիներին և նաև մեր

Памяти моей Луизы



Ты ушла, оставив меня в одиночестве подлом, Ты ушла, забрав с собою печальную дрожь, Ты ушла, оставив меня на обломках лишь боли, Когда чувствуешь ты, что мир – продрогшая ложь... И летел самолет, только ты не сидела ведь рядом, Говорил я с тобой, но ты была... далека, Суетливо корчилась жизнь, вспоенная ядом, А вблизи острой лентой речушка змеилась среди скал... Прощептали губы твои тогда перед смертью Только слово одно заветное – АИАСТАН, И летели последний раз мы с тобой, но не... вместе, На священную землю, в Армению, Ереван.

Հիշում եմ, երբ 2011 թվականի սեպտեմբերի 25-ին զանգահարեցի Արա Գևորգյանին, որպեսզի շնորհավորեմ ծննդյան տարեդարձը և, ասելով շնորհավորանքի առաջին խոսքերը, զգացի, որ չի կարող պատասխանել: Հենց այդ օրը, նա, իր կնոջ վերջին ցանկության համաձայն, նրա անյունն էր տեղափոխում Սայր Հայրենիք, որպեսզի հանձնի այն հայոց հողին: Այդպես էլ մենք չկարողացանք ներկայացնել Արա Գևորգյանի 60-ամյակին նվիրված հոդվածը, որին նա իրավաբ արժանի է, որովհետև մեծ է նրա ավանդը Ռուստովի ոչ միայն հայ հասարակության, այլ նաև ռուս ընթերցողների ու թատերասերների շրջանում երկու լեզուներով՝ հայերեն և ռուսերեն, ներկայացրած հայ դասական գրականության ասպարեզում:

Այսօր Արա Գևորգյանին լավ են ճանաչում ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության հարավում: Տասնյակ գրքերի, հոդվածների, հրապարակախոսությունների հեղինակ է Արա «Տիգրան Մեծ» պատմական դրաման մեծ հաջողություններ ունի ոչ միայն Դոնի Ռուստովում, այլ նաև Ռուսաստանի Դաշնության մյուս քաղաքներում: Նա առաջինն էր, որ Ռուստովում բացեց հայկական ռադիոն, իսկ ինչ վերաբերում է նրա ռուսերեն և հայերեն ստեղծագործություններին, ապա դրա մասին հայտնի է բոլորին:

ազգի հնամյա Կարմիր Ալետարանին, որը գրվել է դեռևս 13-րդ դարում՝ Կարմիր Երեցի կողմից: - Հարգելի Արա Գևորգյան, ես մեկ անգամ շնորհավորում ենք ձեր 60-ամյակը, ցանկանում ենք առողջություն, երկար տարիների կյանք, ստեղծագործական մտքի նորանոր փայլատալաններ: Մենք գիտենք, որ դուք պատրաստվում եք հրատարակել 5-րդ հոբեյանական Ալմանախը, որը նվիրված կլինի բացառապես հայ ժողովրդին: Կարծում ենք, որ այդ գրքում իր ներդրումը կունենա նաև նախնիներիս հայությունը: Հաջողություններ ձեզ և ձեր բոլոր գործերին: Հարցազրույցը Արմինե Հովսեփյանի